

ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐՅԱՆԻ ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՋԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Մ. Կ. ՍՈՂՈՍՈՆՅԱՆ

Մ. Մամուրյանի ազատախոհական հայացքների ձևավորումն անխզելիորեն կապված է իր ժամանակի սոցիալ-տնտեսական տեղաշարժերի և քաղաքական-գաղափարական պայմանների հետ: Մինևույն ժամանակ Մ. Մամուրյանի ազատախոհական գաղափարների բովանդակությունն ու առանձնահատկություններն անհնար է պարզաբանել՝ դրանք կտրելով նրա հասարակական, ստեղծագործական գործունեությունից, կրոնական գաղափարախոսության և կղերականության դեմ մղած պայքարից: Կրոնի էության, ազգային-հասարակական դերի և եկեղեցու հետ կապված բազմաթիվ հարցերի արժեքավորումները շատ դեպքերում ուղղակիորեն խարչսվում են Մ. Մամուրյանի կենսափորձի վրա: Պատրիարքարանի դիվանապետի պարտականությունների կատարման տարիները նոր երանգներ բերեցին նրա աշխարհըմբռնման մեջ: Պատրիարքարանը ոչ միայն կրոնական, այլև ազգային-հասարակական կազմակերպություն էր՝ ներգրավված ազգային, հասարակական ու քաղաքական բազմաթիվ խնդիրների մեջ: Մ. Մամուրյանը՝ հայ հասարակական-գաղափարական կյանքին «եվրոպական հայեցողից» դարձավ նրա գործուն մասնակիցը: Այս աշխատանքը խիստ ուսանելի էր մեկ ուրիշ կողմով ևս. նա հնարավորություն ունեցավ մոտիկից ծանաչելու հայ կղերին, տեսնելու նրա խավարամտությունը, ընչաքաղցությունը, թշնամանքը լուսավորության և առաջադիմության նկատմամբ: Իր աշխատանքում նա ամեննին էլ կղերին հլու կամակատար չէր, քանում էր հավատարիմ մնալ իր սկզբունքներին՝ օգտակար լինել ժողովրդի առաջադիմության, լուսավորության գործին՝ հանդես գալով ժողովրդի շահերի պաշտպանությամբ: Ազգային ժողովում ունեցած իր ելույթներում բարձրացնում է գաղթօջախների կյանքի կնճոտ, անմիջական լուծման կարոտ հարցեր:

Մ. Մամուրյանը մտնում է հասարակական-գաղափարական պայքարի եռուզեղի մեջ, ակտիվորեն մասնակցում է սահմանադրական շարժմանը, հանդես է գալիս Սահմանադրության հաստատման պահանջներով, աջակցում է արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումներին, դրամական միջոցներ հավաքում և առաքում Ջեյթունի ապստամբներին: Այս ընթացքում է, որ նա լայն կապեր է հաստատում արևմտահայ մտավորականության հետ, մեծացնում իր գաղափարակիցների թիվը հայ լուսավորիչների, դեմոկրատների ու հեղափոխական-դեմոկրատների շրջաններից, ազգային, հասարակական-գաղափարական թեմաներով ակտիվորեն հանդես գալիս պարբերական մամուլում, գործուն մասնակցություն ունենում հասարակական ու մշակութային կազմակերպությունների աշխատանքներին:

1865-ից Մ. Մամուրյանը շուրջ երկու տարի խմբագրական աշխատանքներում օգնում է իր գաղափարակից Գր. Զիլինկիրյանին՝ «Ծաղկի» հրատարակման գործում: «Ծաղիկը» հայ դեմոկրատիայի մարտական օրգաններից էր և չնայած իր կարճատև գոյատևումին, մեծ վաստակ ունեցավ բռնակալության և ռեակցիայի դեմ պայքարում: Բավական սուր էին «Ծաղկի» կողմից կրոնի և կոերականության մերկացումները, քանի որ նրա խմբագիր Գր. Զիլինկիրյանի խոսքերով՝ «Ծաղիկը» սովորություն ունի կրոնամոլությունն ապտակել. ազատության ձեռքով¹: Մ. Մամուրյանին հարագատ էին «Ծաղկի» գաղափարները: Այստեղ տպագրվում էին նրա բազմաթիվ հոդվածները, ընդ որում պետք է ընդգծել, որ «Ծաղկում» հրապարակված գործերում նա կանգնած է դեմոկրատական դիրքերում: Պատահական չէ, որ այստեղ նա հանդես եկավ Մ. Նալբանդյանին նվիրված հոդվածներով, ուր պաշտպանում էր հայ հեղափոխական-դեմոկրատին, խարազանում կղերին ու հետադեմներին, հայ մտավորականությանը կոչ էր անում հետևելու Մ. Նալբանդյանի օրինակին, ժողովրդի ազատությունը տեսնում բռնության դեմ մղած պայքարում:

¹ Գր. Զիլինկիրյան, Հայ գրիչը, «Ծաղիկ», 1864, Զմյուռնիա, № 87, էջ 196:

Մ. Մամուրյանի ազատախոհական հայացքների ձևավորմանը մեծապես նպաստել է նրա ստեղծագործական գործունեությունը: Նրա հակակրոնական գաղափարները ցայտուն կերպարանք են ստանում հատկապես թարգմանչական, գրական-հրապարակախոսական և լրագրության բնագավառներում: Թարգմանչական գործը Հայաստանում ուներ դարավոր ավանդույթներ և հսկայական դեր է կատարել հայ մշակույթի պատմության մեջ: Այն մի նոր թափ ստացավ 19-րդ դարի կեսերին: Այս շրջանում հայ լուսավորիչները թարգմանում, պրոպագանդում էին համաշխարհային մշակույթի մեծաթիվ արժեքներ՝ գրականության, հասարակական մտքի ու մշակույթի համարյա բոլոր նշանակալի գործերը: «Նւարավոր չէ հիշատակել որևէ ժողովրդի գանձարանից մի գրական անուն,— այս առնչությամբ գրում է Ս. Գ. Արեշյանը,— որին չհանդիպե՞ք հայ մամուլի էջերում... Թարգմանական այս գրականության ընկալումը նշանակալի չափով կապված էր Թուրքիայում հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի հետ: Առաջադիմական հայ մամուլը գլխավորապես հրատարակել է այն առաջադիմական ստեղծագործությունները, որոնցում պայքարի կոչ էր արվում հանուն հարազատ ժողովրդի ազատության... Մամուլը հաճախ թարգմանական գրականությունն օգտագործում էր այն գաղափարներն արտահայտելու համար, որոնք գրաքննչական պայմանների հետևանքով չէին կարող ուղղակի ձևով դրսևորվել: Այսպիսով, թարգմանական գրականությունը ճշդողների դեմ պայքարում դառնում էր եզոպոսյան լեզվի բաղադրիչ մաս»²:

Թարգմանչական գործի բնագավառում իր արժանի ավանդն ունի Մ. Մամուրյանը: Հայ ժողովրդին եվրոպական գաղափարների հետ ծանոթացումը նա կատարում էր ոչ թե տարերայնորեն, այլ որոշակի սկզբունքներով, ծրագրով՝ ներկայացնել, թարգմանել այնպիսի գործեր, որոնք անմիջական աղբյուրներ ունեն հայ իրականության հետ: Խոսելով թարգմանվող նյութի ընտրության մասին՝ նա նշում է, որ ամեն մի պատահական երկի թարգմանիչը նմանվում է շրջմուխ շան հետևից ընկած ուղևորին, որն ի վերջո անդունդն է գլորվում: «Մեզի հարմարագույն կրթի,— շարունակում է նա,— կբավի այն վիպական պատմություններն, որ հուշակավոր հեղինակներու գործ լինելե գատ, մեր վիճակին, մեր կենաց գեթ անտղղակի նկարագիրն ընծայեն և ի լավ անդր դիմելու մեզ գրգիռ և հրապույր տան»³:

Եվրոպական գրականության ու հասարակական մտքի պրոպագանդման ծրագրում Մ. Մամուրյանն ակնհայտորեն առաջ է քաշում հասարակական կյանքի վերափոխման, այդ թվում և՛ կրոնի տիրապետության տապալման պահանջը: Մ. Մամուրյանի պատկերացմամբ՝ եվրոպական առաջավոր գաղափարների սերմանումը ժողովրդի մեջ կկրթի, կբարձրացնի նրա գիտակցությունը, նրան կպարզևի այն լուսավառ փարոսը, «որին կհետևին այն հանկարծահաս հեղափոխական շրջումները, որ քաղաքական, կրոնական ու գրական հին դրույթները հիմն ի վեր կտապալեն...»⁴:

Եվրոպական քաղաքակրթության առաջավոր գաղափարների տարածումը Հայաստանում մեծապես դիպչում էր կրոնի և եկեղեցու ավատական հետամնացության վրա հենված տիրապետությանը, խարխլում նրա հիմքերը: Եվ պատահական չէ, որ հայ եկեղեցին ու նրա գաղափարախոսները շանքեր չէին խնայում փակելու առաջավոր գաղափարների Հայաստան մուտք գործելու ուղիները: Մ. Մամուրյանի և ընդհանրապես հայ առաջադիմական հասարակական մտքի ներկայացուցիչների համար «վանական մենություն» պարիսպների խարխլումը այնքան էլ հեշտ չէր. այս ծանապարհին նրանք հանդիպում էին կղերականության ամենակատաղի դիմադրությանը, շատ հաճախ և պատժիչ արգելքներին:

Այսպես, իր թարգմանությունների համար Մ. Մամուրյանը գերծ չմնաց կղերականության հարձակումներից. դրան պատճառ եղավ առաջին հերթին Վոլտերի գործերի թարգմանությունը: Վոլտերի անունն արդեն կրոնին ու եկեղեցուն խարազանողի խորհրդանիշ էր, ներանց համար ահ ու սարսափի աղբյուր, ուր մնաց նրա «անաստվածային» գործերի հրատարակումը: Եվ կղերականության երկյուղը Վոլտերի նկատմամբ անհիմն չէր: Ինչպես հայտնի է, Վոլտերը մարտնչող հակակղերականության փայլուն ներկայացուցիչն էր, Ֆրանսիական բուրժուական հեղափոխության գաղափարական նախապատրաստողներից մեկը, որն իր «ձգմել սողունին» խրոխտ կոչով, իր բազմաթիվ հակաքրիստոնեական ու հակակղերական գործերով հարձակվեց կաթոլիկ եկեղեցու և հոգևորականության վրա: «Ես դաժան մարտիկ եմ,—ասում է նա,— պատերազմ եմ հաղթարարել հոգևորականությանը»⁵:

Եվրոպական հասարակական և փիլիսոփայական մտքին ծանոթ Մ. Մամուրյանը, անշուշտ, Վոլտերի հայացքների այս ասպեկտին ևս քաջ տեղյակ էր: «Անգլիական նամակա-

² С. Г. Арешян. Об изучении литературных связей и взаимодействий советским армянским литературоведением (1920—1960).—Изв. АН Арм. ССР (обществ. науки), 1960, № 5—6, стр. 72.

³ Վ. Ալոտ, Իվանոե, հ. 1, Ջմյուռնիա, 1872, էջ 5:

⁴ Գյոթե, Վերթեր, Ջմյուռնիա, 1868, էջ 6:

⁵ Вольтер. Боги и люди, т. 1, М., 1961, стр. 13.

Նիում», բարձր դասելով Վոլտերի ծառայությունը եվրոպական քաղաքակրթության զարգացման գործում, Նա Նշում էր, որ Վոլտերը «փոխեց իր դարուն մտածությանց ընթացքը, սարսեց, արթնացուց եվրոպայի հույ բանականությունը, թոթափեց, ցնդեց Լոլոյայի աշակերտաց ձեռոջ ժողովրդոց խմած թմբիրը...», ինքը եղավ մեծ ու լուսավոր թվական մը բացողը»⁶:

Առտարակույս Մ. Մամուրյանը հասկանում էր, որ թարգմանելով Վոլտերին՝ կհարուցի հայ կղերի ու հետադիմականների զայրույթը, սակայն ազգային լուսավորության, հասարակական կյանքի վերափոխման խոր մտայնությունը նրան մղում էր չվախենալ կղերական դավերից և ամեն գնով ժողովրդին ներկայացնել առաջադիմական, այդ թվում և հակակրոնական գաղափարներ: «Զաջ փութեմ,— գրում է Նա «Զատկի» առաջաբանում,— որ Վոլտերի անունը ընդհանրապես մեր ազգին մեջ անհավատի համախոն է: Նա որ ԺԸ-րդ դարուն գրականության վեհապետը, ժամանակիս մտավորական հեղափոխության և հառաջադիմության պարագլուխն եղած է, մինչև ցարդ հետադեմներեն կամբաստանվի իբրև ամբարիշտ մը, անկրոն հրեշ մը»⁷:

Եվրոպական առաջադիմական գաղափարների պրոսպագանդան Մ. Մամուրյանի ողջ կյանքի անբաժան ուղեկիցն էր: Մինևույն ժամանակ նրա գործունեության այս կողմը հսկայական դեր կատարեց նրա ազատախոհական օտոափառների ձևավորման ու ամուսպնման գործում: Վստահորեն կարելի է սսել, որ Մ. Մամուրյանի հակակրոնական գաղափարների սնուցման հիմնական աղբյուրներից մեկը եվրոպական. հատկապես 18-րդ դարի ֆրանսիական լուսավորիչների ու մատերիայիստների. նրանց ճառագարական ածի շարունակողների, որոշ չափով նաև անգլիական հակակրոնական մտքի ներկայացուցիչների աթեիստական գաղափարներն էին: Ընտ որում, այսպիսի «հետքեր» կարելի է տեսնել ոչ միայն Մ. Մամուրյանի, այլև հայ ազատախոհական մտքի համարյա բոլոր նեոկաթոլիցիների բազմաթիվ ստեղծագործություններում: Անդրառառնալով հայ հասարակական կյանքի ու մտածողության վրա ունեցած եվրոպական և հատկապես ֆրանսիական ազդեցությունը՝ Մ. Մամուրյանը եզրակացում էր, որ «այն ստեղծ ոչ միայն արդև ու զարդր, տարազև ու նախույր ֆրանսաեն եկան, այլև Ֆրանսան տվավ մեզ մտքի սնունդ, սրտի զգացում, նույնպես մեր կրից ճարակ, և թեթևամըտության նյութ»⁸:

Մ. Մամուրյանի օեղարվեստական ժառանգության մեծ. հատկապես «Անգիական Նամանի» և «Հաբկական Նամականի» ծոոծեոում ռուսաբանմոո բազմաթիվ հարցերի թմում զգալի տեղ են գրավում նաև կրոնաեկեղեցական խնդիրները: Հաճախակի անոոոառանաւով դրանց՝ Մ. Մամուրյանը ան նեոկաթոլիզմում է ժամանակի հասարակական ու օտոափառական բարո հոռուեոեի մեջ և. ճնաւած սոատախոհական օտոափառների առտահայտման հայտնի ոժմաոոութուններին ու վտանգին, կարոոոանում է ելք օտնել իր առաջադիմական գաղափարների հաւաո. տաշտոսանել իր տեսակետը. խաղաօանել կղերականութաւնը:

Այնատոութան առաջին նամակում Մ. Մամուրյանը նանւ է աոնում Թուոքիայում ստեղծւած սոամանների վրա, մառնանաշում է, որ յուսավոր մոթի ամեն մի ծյաոձակման ճանաասուոի փաւլմում է թուոթական օոաթննութան և նրա կամաւատար հայ կղերաւսնների ու հետադիմականների բոռնօքով: Նա տեսնում էր ստեղծված վիճակի վտանգավորությունը՝ եոկսարոի սուրը՝ «ոոութունը մաի կսասոնա, ազատ հրատարակությունը՝ պատիժ» և, անաուա, օեոադասում է գոյի հզոր գեւըր, քանի որ վերջինս, ոստ Մ. Մամուրյանի, թեւ մեկ հարվածով չի կոոոում բոնութան ու մոլորութան գլուխը, այնուամենայնիվ գոյի, ուրեմն և նոանով առտահայտվող օոոափառների օաւութամա հնաոամոո է քիս թե շառ միճակը շուկել և հոո նախապատասաոել, որ «հաթորդ սեոումոը բանական յույոտ օտնե»: «Ուրեմն չեմ հուսահաոիո — մճոում է Մ. Մամուրյանը. — ես ալ օոելու պիտի սեւսիմ, թեւ բոլորոմին ազատ եոկրի, աօատ մթնոլորոի մեծ շնեւ. մտաձեւ և գրել կսիրիմ, թեւ չեմ պիտրժիր մեւ մի բաոս. մեւ մի խոսքս կրելու, իմատոս ոճիս գոհել, ոոպեոգի թշնամին անոր մեջ ամբաստանութան և ոաոտի կեո մո չնձարե...»⁹:

Աստեոի չէր յինի այստեղ հիշատակել հեղափոխական-ոեմոկրատ Գեոքցնի դիպուկ դիտոոոութունո գրաթննութան մասին: «Գոաքննութունո.— գրում է Նա,— շատ է նապասոում ոճի մարեետութան գարազամանն ու խոսքը սանձելու կաոոոութաւնը...: Ընթերցողո, ոո գիտե, թե ոոքան պիտի օոն յինի գրոոո. կաողում է ուշաոիո. նա և հեղինակի միւն ստեղծւում է օաոտնի կաս. մեկը թաջգնում է ան, հնչ օոում է. իսկ մոուր՝ այն ինչ հասկանում է: Ուստի գրաթննութունը դա մի սարդոստան է. ոոի մեջ կճճմում են սոսկ մանր ճանճերը,

⁶ Մ. Մամուրյան, Երկեր, Եր., 1966, էջ 105:

⁷ Վոլտեր, Զատկի, Կ. Պոլիս, 1867, էջ 4:

⁸ Վ. Մկրտ, Իվանոե, հ. 1, Զմյառնիա, 1872, էջ 2:

⁹ Մ. Մամուրյան, Երկեր, էջ 394:

մինչդեռ խոշորները պատում են այն¹⁰։ Մ. Մամուրյանը ևս պատում էր սուլթանական գր-
րաքննչության և հայ հետադիմականների սարդոստայնը և իր ասելիքը հասցնում ընթերցող
լայն հասարակախությանը։

Կրոնական գաղափարախոսության և կղերականության դեմ Մ. Մամուրյանի մղած պայ-
քարը առանձնահատուկ սրությամբ դրսևորվում է նաև նրա ստեղծագործության մյուս կարե-
վոր բնագավառում՝ «Արևելյան մամուլ» հանդեսի խմբագրման, հրատարակման ու հեղինակ-
ման աշխատանքներում։ Իր հրատարակման օրից (1871 թ.) «Արևելյան մամուլը» շուրջ 30
տարի Մ. Մամուրյանի կյանքի անբաժան ուղեկիցը դարձավ։ «Եվ արդարև, — գրում է «Մա-
սիսը», — բուն իսկ «Արևելյան մամուլին» մեջն է, որ երևան եկավ Մ. Մամուրյանի տաղանդը
բազմակողմանի նյութերու, զանազան ծյուղերու վրա գրելու և ամենուն մեջ ալ հաջողելու
կարողությունը։ Քննադատող մը ու փիճաբանող մը իր լրագրապետի գրեթե բովանդակ կյան-
քին մեջ, Մամուրյանը ընդդիմախոսներ ու հակառակորդներ ունեցավ իր դեմ, առանց սակայն
բնավ տեղի տալու և մինչև վերջը մնալով իր համոզումներուն վրա»¹¹։

«Արևելյան մամուլը» հասարակական-քաղաքական, գրական հանդես էր, նրանում ար-
տացույվել են ազգային-հասարակական, գաղափարական և մշակութային կյանքի բազմապի-
սի և բազմաթիվ նյութեր, ինչպես նաև տեսական հետազոտություններ՝ նվիրված բնագիտա-
կան, տնտեսագիտական, բարոյագիտական, փիլիսոփայական խնդիրներին։ Ամսագիրը ար-
ձագանքել է Բեկոնի, Լոկի, Վոլտերի, Ռուսոյի, Մոնտեսքյուի, Հերոսի, Միլլի, Սպենսերի, Շո-
պենհաուերի, Կանտի, Հեգելի ուսմունքներին։ Ավելոդը չէր լինի նշել, որ Փարիզյան կոմունա-
յի ջրջանում հանդեսը զգալի ակտիվությամբ անդրադառնում էր պրոլետարիատի գոտեմար-
տերին, գովելով «երկինք գրոհող» կոմունարների պայքարը, դրվատանքով խոսում առաջին
խտերնազցիոնալի, ինչպես նաև «բավվորների միջազգային եղբայրության» և նրա հիմնադիր
Կ. Մարքսի մասին¹²։

«Արևելյան մամուլում» անուշադրության չէին մատնված նաև, այսպես կոչված, կրոնա-
եկեղեցական խնդիրները, կրոնական գաղափարախոսության, եկեղեցու ու կղերականության
քննադատությունը։ Կրոնական գաղափարախոսության քննադատություններ՝ դրական օրինակ կա-
րող է հանդիսանալ բնական գիտությունների՝ ֆիզիկայի, քիմիայի, աստղագիտության, կեն-
սաբանության և այլ նվաճումների պրոպագանդան, որ իր հետ բերում էր աշխարհի բնագի-
տական աստվերի հակադրումը կրոնական աշխարհըմբռնողությանը։

Ինչպես հայտնի է, աթեիստական ուսմունքները շատ հաճախ հենվում են բնագիտության
նվաճումների վրա, և պատահական չէ, որ կրոնի քննադատության օրոքում բնագիտության
դերը բարձր են օժանդակել աթեիստական մտքի շատ ներկայացուցիչներ։

Այս խնդրում բնագիտության դերը շատ դիպուկ է գնահատում Ա. Ի. Գեդցերը։ «Առանց
բնագիտության. — գրում է նա, — ժամանակակից մարդուն փոկություն չկա, առանց մեզ ջրթա-
աատող կանքին այդ մոտիկության, առանց նրա անկախության նկատմամբ հաշտվողության,
մարդու հոգու ինչ-որ անկունում կմնա կղերական տեղը և նուրում միտիկական այն հատի-
կը, որը կարող է ամեն մի քամիքից լուծել առտող ջրոն»¹³։ Եվ մեզ համար կրոնի քննա-
դատության, նրա հասարակական նեոսոցիալության հարթահարման օրոքում բնագիտությանը
մեծ դեր էին հատկաձևում նաև մաթեմատիկայի նվաճումները։ Այս առնչությամբ նույնպես օգուտ
բերող բնագիտություններից բամական է հիշատակել Ֆ. Էնսեսի գրությունը։ «Միայն բնու-
թյան ուժերի իսկական հմացությունն է իրար հետևից վնդում աստվածներին կամ աստծուն
բոլոր բնագամաններից»¹⁴։

«Արևելյան մամուլում» զգալի տեղ է տրված բնագիտության նվաճումների քննադատու-
մանը, որն իր մեջ ընդգրկում էր եվրոպական բնագիտության աշխատությունները ու նրանց
ուսմունքները օրոքաբանող օրոքները, ինչպես նաև հայ բնագիտության՝ Ն. Տարսմառյանի, Կ.
Փաշայանի, Կ. Նավասարդյանի երկերը, ինչը կարևոր նշանակություն ուներ կրոնական ա-
ռուսիարախոսության և աշխարհի կրոնական աստվերի խաբխուման և ընդհանրապես կրոնի
քննադատության գործում։

Այս իմաստով հատկանշական է Մ. Մամուրյանի հարցազրույցը Ա. Բրջբեյի «Համառոտ պատ-
մություն բնական գիտության» և Պ. Ֆեոֆերի «Տարսմառյանի ոգություն» աշխատությունների
հրատարակումը «Արևելյան մամուլում»։ Նպատակ ունենալով լայն հասարակախությանը ծա-
նոթացնել աշխարհի գիտական աստվերի հետ՝ Մ. Մամուրյանը բնական գիտությունների

¹⁰ А. И. Герцен. Литература в общественной мысли после 14 декабря 1825 г. Поля. собр. соч. и писем (под ред. М. К. Лемке), т. VI. Петербург, 1919, с. 367.

¹¹ «Մասիս», Կ. Պոլիս, 1901, № 1, էջ 3:

¹² Տե՛ս Մ. Մամուրյան, «Արևելյան մամուլ», 1871, № 4, էջ 171—174, № 5, էջ 227—232, № 6, էջ 257—260, 282—286, 1872, № 9, էջ 413—415:

¹³ А. И. Герцен. Былое и думы.—Собр. соч. в 30 томах, т. VIII, 1956, стр. 114.

¹⁴ К. Маркс, Ф. Энгельс. Соч., 2 изд., т. 20, стр. 639.

պատմությանը նվիրված Բըքլեյի սովորածավալ աշխատության թարգմանությամբ ներկայացնում էր բնական գիտությունների նվաճումները, նրանց զարգացումը անտիկ աշխարհից մինչև 19-րդ դարի կեսերը:

Կրոնական գաղափարախոսության դեմ պայքարի սրությամբ առավել աչքի էր ընկնում «Արևելյան մամուլում» դարվինյան ուսմունքի պրոպագանդումը, որը Մ. Մամուրյանն անում էր «Տարվինյան դրուբյուն» աշխատության հրատարակումով: Այս թարգմանությանը նախորդող «Չարյս Ռ. Տարվին և իր գործը» հոդվածում Մ. Մամուրյանը, խոսելով Դարվինի ուսմունքի՝ գիտության պատմության մեջ ունեցած դարակազմիկ նշանակության մասին, ավելացնում էր, որ այն առաջացրել է կղերականության անհաշտ ու թշնամական վերաբերմունքը, քանի որ հերքում էր դարեր ի վեր ընդունված կրոնական ծմարտությունները: «Ոմանք իբրև Մ. Գրոց թշնամի,— գրում է Մ. Մամուրյանը,— այլք իբրև անատված կնկատեն Տարվինը, և ամենուն ատելության և ամբաստանության հիմն այս է, թե Տարվին մարդս կապել կ'իջնե, ըսած լինի, առաջադրություն մ' որով հիմն ի վեր տապալեր է դարերե ի վեր ընդունված կրոնական և պատմական ծմարտություններ: Եվ սակայն այս ամբաստանությունը պարզապես չարակամության կամ տգիտության արդյունք է»¹⁵:

Մ. Մամուրյանն իր հոդվածում ոչ միայն պաշտպանում է Դարվինի ուսմունքը, հարձակվում կրոնական մոլեռանդության և կղերականների խավարամտության վրա և դրանով ծանապարհի հարթում նրա մասսայականացման համար, այլև մատնանշում է կղերականության կողմից Դարվինի ուսմունքի և ընդհանրապես գիտության նվաճումների քարկոծման պատճառը՝ ժողովրդին տգիտության մեջ պահելով՝ նրան շահագործել:

Հասկանալի է, որ գիտության նվաճումների և նրանց կցվող նման առաջաբան-բացատրությունների հրատարակումը կղերականության սրտով չէր կարող լինել: Բայց «Արևելյան մամուլում» տեղ էին գտնում Մ. Մամուրյանի կղերականությանը առավել սրությամբ քննադատող գործերը, և ընդհանրապես, այս հանդեսում է ամփոփված նրա ստեղծագործական ժառանգության ճշող մեծամասնությունը, որոնց մեջ զգալի տեղ են գրավում կրոնին ու եկեղեցուն վերաբերող նյութեր: Ծիշտ է, այս նյութերի որոշ մասը հիմնականում բովանդակում էր արտաքննապես «անմեղ» տեղեկություններ և կարծես թե չէր դիպչում ահագու հեղինակություններին, սակայն այդ թվացյալ չեզոքության մեջ հանկարծ պայթում են կրոնի, եկեղեցու, բարձրաստիճան հոգևորականության սուր քննադատություններ: Իսկ դրանք էլ պատճառ էին դառնում «Արևելյան մամուլի» նկատմամբ կղերականների ձեռնարկած դժվարություններին՝ սկսած ամբաստանքներից մինչև նրա փակումը: Պատահական չէ, որ «Արևելյան մամուլի» երեք խափանումներն էլ կապված էին նրանում արտացոլված կրոնի և եկեղեցու քննադատության հետ:

«Արևելյան մամուլի» առաջին արգելումը տեղի ունեցավ 1876 թ.:

Ամսագրի վերականգնումից հետո Մ. Մամուրյանը կրկին գործի է դնում իր խարազանող գրիչը և առաջավոր գաղափարների սերմանմամբ շարունակում աստվածապետության շրթանների քակումը: 1889 և 1891 թթ. հաջորդում են ամսագրի նոր խափանումները: Պատճառը, ըստ էության, նույնն էր՝ կրոնի և եկեղեցու քննադատություն՝ այս անգամ կապված կաթողիկոսի ընտրության հետ: 1891 թ. արգելքով ամսագիրը թաղաքում և մասնավորապես էջմիաձնի կաթողիկոսական խնդիրների մասին գրելու իրավունքից զրկվում էր: Քաղաքական-գաղափարական ռեակցիան հարկադրում էր Մ. Մամուրյանին հեռու մնալ առաջադիմական ու սուր պրոբլեմների արձարձումից: «Մամուրյանի տարիքի հետ միասին,— գրում է Հ. Ղազարյանը,— «ձերանում էր» և «Արևելյան մամուլը», կորցնում է իր բաժանորդների մեծ մասը, չափավորում լեզուն»¹⁶: Մնում է ավելացնել, որ դա ոչ թե բնական, այլ մեծ չափով և հարկադրական «ձերություն էր»: Բոլոր դեպքերում իր լուսաբանած առաջավոր գաղափարներով «Արևելյան մամուլը» խոր հետք թողեց հայ հասարակական կյանքում և մշակույթում, ինչպես նաև զգալի վաստակ ունեցավ կրոնական գաղափարախոսության և կղերականության քննադատության գործում:

Այսպիսով, իր շուրջ կես դար ընդգրկող ստեղծագործական կյանքում, հասարակական, գաղափարական բեղմնավոր գործունեության գրեթե բոլոր բնագավառներում Մ. Մամուրյանը պայքարում էր կրոնական գաղափարախոսության և կղերականության տիրապետության դեմ, չնայած Արևմտյան Հայաստանում իշխող աստվածապետական ու կղերական ռեակցիային, կարողանում էր ուղիներ հարթել իր առաջադիմական, ազատախոհական գաղափարների արտահայտման և լայն հասարակության մեջ տարածման համար: Մ. Մամուրյանի հակակրոնական հայացքները, սնուցվելով արևմտաեվրոպական և հայկական հասարակական մտքի՝ կրոնի

¹⁵ Մ. Մամուրյան (Ապրսամ), «Արևելյան մամուլ», 1896, № 9, էջ 274—275:

¹⁶ Հ. Մ. Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Եր., 1967, էջ 74:

քննադատության ավանդույթներից, ձևավորվում ու ամրապնդվում էին հենց այս բախումների բովանդակում և ի վերջո վերածվում կրոնի տուր քննադատության և մարտնչող հակակղերականության համակարգի:

М. К. СОГОМОНЯН—Основы формирования антирелигиозных взглядов Маттеоса Мамуряна.—Формирование антирелигиозных взглядов М. Мамуряна происходило на основе крупных социально-экономических, политических и идеологических сдвигов в армянской действительности второй половины XIX века. В статье показана борьба М. Мамуряна в условиях клерикальной реакции против господства религиозной идеологии и духовной власти. Источником антирелигиозных идей М. Мамуряна являются европейская атеистическая мысль, в особенности взгляды французских просветителей и материалистов XVIII века. Творчески усвоив передовые традиции армянской общественно-политической мысли и западноевропейской философии и основываясь на достижениях современного естествознания, М. Мамурян обогатил армянское свободомыслие новыми принципами и положениями, которые и по сей день не утратили своей актуальности и воинствующего материалистического характера и могут быть полезны для критики религиозной идеологии.